




Փետրվար ամիսը նշանավորվում է հայ իրականության մեջ «Վարդանանց տոնով», որը ազգային ինքնությունության, հայրենասիրության մի ամփոփ վավերացում է:

«Վարդանանց տոնը» Օհանյան կրթահամալիրում նշանավորվեց հազեցած միջոցառումների շարքով: Շաբաթը ամփոփվեց ուժի, գեղեցկության, ճկունության, հնարամտության շքեղ մրցույթով, որը տեղի ունեցավ Եվրասիա միջազգային համալսարանում: Մարմնակրթության ուսուցչուհի

Լ. Դանիելյանը կազմակերպել էր «Սպորտլանդիա» բարձր դասարանի աշակերտների միջև:

Համալսարանի ուսանողները հիացած և զարմացած նայում էին, թե ինչպես են ցուցապաստառներով, տոնական տրամադրությամբ վարժարանականները մտնում համալսարան: Լ. Դանիելյանին կազմակերպական հարցերում օգնում էին կրթահամալիրի ուսուցիչները՝ մի կուռ թիմ՝ ուսուցիչներից և աշակերտներից կազմված:

Կազմվեցին 2 թիմ, հանձնաժողովի անդամները զբաղեցրին իրենց տեղերը և մրցույթը սկսվեց:



Դահլիճում մեծ ոգևորություն էր, մրցակցություն: Հաղթող թիմը ստացավ մրցանակ, մյուս թիմը՝ խրախուսական պարգև, իսկ ցուցապաստառներով հանդես եկած դասարանները ստացան շքանշան: Հայոց եկեղեցու պատմության ուսուցչուհի Լ. Վահանյանը «Վարդանանց տոնի» առթիվ պատրասել էր մաղթանքներ՝ Վարդանանց պատերազմի մասնակիցների անուններով:

Երկար կմնա մասնակիցների հիշողության մեջ այդ հիշարժան օրը:

